**ԱՄՓՈՓԱԹԵՐԹ**

**«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (*Պ-403-24.10.2018-ՊԻՄԻ-011/0*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԳՐԱՎՈՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ**

| N | ԱՌԱՋԱՐԿԻ ՀԵՂԻՆԱԿԸ | ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԸ ԿԱՄ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԸ | ԱՌԱՋԱՐԿԸ | ԱՌԱՋԱՐԿՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՄ ՄԵՐԺԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐՈՇՈՒՄԸ |
|---|---|---|---|---|
| 1 | Ռուստամ Մախմուդյան | Նախագիծ | ***Հոդված 1.*** «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» 2018 թվականի փետրվարի 7-ի ՀՕ-95-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 132-րդ հոդվածի 1-ին մասը «առաջանալու» բառից հետո լրացնել «, իսկ Ազգային ժողով ներկայացված թեկնածուներից քվեարկության արդյունքում Վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածու չընտրվելու կամ Հանրապետության նախագահի առարկությունն ընդունվելու դեպքերում՝ համապատասխանաբար թեկնածու չընտրվելու կամ Հանրապետության նախագահի առարկությունն ընդունվելու» բառերով:<br>***Հոդված 2.*** Օրենքի 133-րդ հոդվածի 10-րդ մասը «մնալու» բառից հետո լրացնել «, ինչպես նաև Ազգային ժողով ներկայացված թեկնածուներից քվեարկության արդյունքում Վճռաբեկ դատարանի դատավորի թեկնածու չընտրվելու կամ Հանրապետության նախագահի առարկությունն ընդունվելու» բառերով:<br>***Հոդված 3***.Օրենքի 135-րդ հոդվածում՝<br>1) 1-ին մասը «առաջանալու» բառերից հետո լրացնել «կամ | ընդունվել է |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | Ազգային ժողովի կողմից քվեարկության արդյունքում Վճռաբեկ դատարանի նախագահ չընտրվելու» բառերով.<br>2) 12-րդ մասում «մնալու» բառից հետո լրացնել «կամ Ազգային ժողովի կողմից քվեարկության արդյունքում Վճռաբեկ դատարանի նախագահ չընտրվելու» բառերով:<br>***Հոդված 4.*** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից: | |